ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հերթականատեստավորմանենթակառուսուցիչներիվերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ – Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարաության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ – Վարդեիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ – Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ – Ֆլորա Աթաջանյան

ԴՊՐՈՑ – «ՀՀ Գեղարքունիք մարզի Շատվան գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՎԱՐԴԵՆԻՍ
2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Ուսուցման գործընթացի էությունը ----------4

3. Ուսուցման կազմակերպման ձևերը ----------5

4. Դաստիարակության գործընթացի առանձահատկությունները ----------7

5. Եզրակացության ----------10

6. Գրականության ցանկ----------11

7. Դասապլաններ.....12

Ներածություն

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով: Կարելի է ասել՝ գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները:

Մանկավարժություն օբյեկտը կրթությունն է, որի միջոցով դպրոցականները տիրապետում են գիտությունների հիմունքներին, ձեռք բերում գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և դրանց հիման վրա ձևավորում իրենց հայացքներն ու համոզմունքները, իդեալները, գիտական աշխարհայացքը, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական որակներն ու հասարակական վարքը:

21-րդ դարը, մեր օրերի հասարակությունը կրթությունից պահանջում է աճեցնել համակողմանի զարգացած, լայն մտահորիզոն ունեցող, դաստիարակված, բարոյապես զարգացած սերունդներ: Այդ խնդիրները կարելի է լուծել միայն ու միայն բարեփոխված կրթության և ինքնակրթության՝ դրանց բոլոր աստիճաններն անցնելու, կայուն ու խոր գիտելիքներ ձեռք բերելու, յուրացրած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կյանքում կիրառելու միջոցով:

Ուսուցիչը միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներին գինում է գիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով, լուծում կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրները, ձևավորում սովորողների գիտական աշխարհայացքը և հասարակական վարքը: Ուսուցչի դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր մարդու, անձի զարգացման և ձևավորման համար:

Ահա թե ինչու չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին ասում էր «Արևի տակ ուսուցչի մասնագիտությունից բարձր մասնագիտություն չկա»: Ուսուցիչը կրտսեր դպրոցականի, դեռահասի, պատանու, երիտասարդի հոգեկան աշխարհի կերտողն է:

Ուսուցման գործընթացի էությունը

Մանկավարժության հիմնական հասկացություններից են ուսուցումը, կրթությունը, դաստիարակությունը, զարգացումը, ձևավորումն, ինքնակրթությունն, ինքնադաստիարակությունը և այլն:

Ուսուցումը ուսուցչի և աշակերտների փոխազդեցության նպատակաուղղված գործընթացն է, որի ընթացում իրականացվում են դպրոցականի կրթությունը, դաստիարակությունը և զարգացումը: Մարդու կրթությունը ոչ միայն ուսուցման, այլ նաև ինքնակրթության և զանգվածային լրատվամիջոցների ներգործության արդյունք է:

«Ուսուցում» հասկացությունն ավելի կոնկրետացնելու նպատակով կարելի է ասել՝ դա ճանաչողական գործընթացէ, որի ընթացքում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ: Գիտելիքը բնական, հասարակական երևույթների ճշգրիտ արտացոլումն է մարդու ուղեղում կամ մտածողության մեջ: Գիտելիքը պրակտիկայում ստուգված իրականության ճանաչողության արդյունքն է: Գիտելիքներում արտահայտվում է մարդկանց ընդհանրացված փորձն, որը կուտակվել է հասարակական – պատմական պրակտիկայի ընթացքում: Կարողությունը մարդու ձեռք բերած գիտելիքների հիման վրա գործողությունները հաջողությամբ կատարել, դրված խնդիրները առկա պայմաններին համապատասխան լուծել կարողանալն է: Հմտությունը միևնույն գործողության բազմակի կրկնությունն է նույն կամ համանման պայմաններում, որոնքհանգեցնում են հմտությունների ձևավորմանն: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողների կարգավորված, փոխկապակցված գործունեության եղանակ է, գործունեություն, որն ուղղված է ուսուցման գործընթացում կրթության, դաստիարակության ու զարգացման խնդիրների լուծմանն: Ուսուցումն աշակերտներին տրվող գիտելիքները, կարողություններն ու հմտություններն են: Ուսուցման գործընթացը ուսուցիչների ու աշակերտների փոխկապակցված, իրար հաջորդող ու փոփոխվող փոխազդեցություն է, որի ընթացքում լուծվում են սովորողների կրթության, դաստիարակության և ընդհանուր զարգացման խնդիրներն:

Ուսուցման գործընթացն իրականացվում է ուսուցչի ու աշակերտի փոխազդեցության ընթացքում: Ուսուցումն ունի երկկողմանի բնույթ՝ դասավանդում և ուսում: Դասավանդումն ուսուցչի գործունեությունն է, ուսումը՝ աշակերտի: Կարելի է ասել, որուսուցման գործընթացը սովորողի ակտիվ,նպատակաուղղված, փոխկապակցված փոխազդեցություններն են, որոնց միջոցով սովորողների մեջ ձևավորվում են որոշակի գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ, գործունեության վարքի փորձ, ինչպես նաև անձնական որակներ:

Ուսուցման դաստիարակչական գործառույթի միջոցով ուսուցումը ոչ միայն մատուցում է գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլ նաև ձևավորում է սովորողների հայացքները, համոզմունքները, գիտական աշխարհայացքը, վարքն, իդեալները, բաղաքացուն հատուկ գծերն, այսինքն՝ կատարում է դաստիարակչական գործառույթ: Այդ ամենը իրականացվում է ուսումնականառարկաների միջոցով: Երբ պատմությունից սովորողները յուրացնում են «Ավարայրի ճակատամարտը» ուսումնական նյութն, ապա այս

ընթացքում նրանք ստանում են ոչ միայն գիտելիքներ, այլև ժողովրդական պատերազմի վերաբերյալ հայացքներ, համոզմունքներ, թշնամու նկատմամբ ատելություն, հայրենասիրություն, իր ժողովրդին հանուն արդարության նվիրելու գաղափարներ, զգացումներ և այլ որակներ:

Ուսուցման դաստիարակչական գործառույթի իրացումը կախում ունի ուսուցման բովանդակությունից, գործադրվող մեթոդներից, ուսուցչի մանկավարժական վարպետությունից, ուսուցման կազմակերպման ձևերից և այլն: Ուսուցման դաստիարակչական գործառույթի էության գլխավոր կողմն այն է, որ կրթական գործընթացին տալիս է որոշակի ուղղվածություն և հասարակական նշանակություն:

Ուսուցման կազմակերպման ձևերը

Այստեղ ես օգտագործում «պատմել» մեթոդը: Ներածական խոսքում ես հաղորդում եմ ուսումնասիրվող նյութի թեման, այն կապում նախորդ թեմայի հետ, նշում թեմայի, նշանակությունը, կարևորությունն, ուսումնասիրության նպատակը: Ձևավորում եմ գլխավոր հասկացությունն, աշակերտներին հիշեցնում, թե ինչ են յուրացրել նախորդ թեմաներից: Այդ ամենից հետո պատմում եմ ուսումնական նյութի բովանդակությունը: Պատմելու ընթացքում առանձնացնում եմ նյութի գլխավոր տարրերը: Հաջորդած նյութը հիմնավորում եմ օրինակներով, փաստերով:

Մերթ ընդ մերթ ընդհատում եմ իմ շարադրանքն, աշակերտներին մասնակից դարձնում նոր նյութի հաղորդմանը, ակտիվացնում նրանց ճանաչողական գործունեությունը: Նյութը հաղորդելու ընթացում ստեղծում եմ հուզական պահեր, իրավիճակներ: «Պատմել» մեթոդի կիրառման ժամանակ ես գործադրում եմ մի շարք հնարքներ, այսպես, օրինակ՝ «համեմատության», «համադրության», «սովորողների ուշադրության ակտիվացման» և այլն:

Ուսումնական նյութի շարադրանքն ավարտելուց հետո ամփոփում եմ իմ պատմածներն, առանձնացնում նյութի գլխավոր մտքերը, հասկացությունները, հիմնական փաստերը: Նոր հաղորդած նյութը ամրապնդում եմ հարցերով, զանգը հնչեկուց հինգ րոպե առաջ աշակերտներին տալիս եմ հանձնարարություններ տանը կատարելու համար, պարզաբանում հանձնարարության պահանջները:

«Պատմել» մեթոդի կիրառման արդյունավետությանը նոր նյութի համակողմանի յուրացումն է, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրությունը:

Ուսուցիչը ուսումնական նյութի բովանդակությունն ուսուցանելիս այն կապում է առօրյա կյանքի, երևույթների, ժողովրդական տնտեսության առկա հիմնախնդիրների հետ: Եվ ապա՝ ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ աշակերտներն ունենան իրենց ձեռք բերած գիտելիքները կյանքում, պրակտիկայում կիրառելու հնարավորություն:

Օրինակ՝ կենսաբանությունից յուրացրած գիտելիքները կարող են կիրառել դպրոցի ուսումնափորձնական հողամասում, այսինքն՝ հետևել բույսերի աճին, հետազոտել հողի, բույսի, ջրի, դրանց ու արեգակնային էներգիայի փոխկապակցությունները, միասնությունը: Կամ՝ աշակերտներն աշխարհագրությունից ձեռք բերած գիտելիքների հիման վրա, աշխարհագրական հրապարակում կարող են որոշել օդի ՝ օրվա, ամսվա, տարեկան միջին ջերմաստիճաններն, օդի խոնավությունը: Եվ կամ՝ ֆիզիկայից, քիմիայից ստացած գիտելիքներն աշակերտները կարող են կիրառել դպրոցի ուսումնական կաբինետում, քիմիայի լաբորատորիայում, մոտակա արդյունաբերական ձեռնարկության համապատասխան արտադրամասերում, դպրոցի արհեստանոցում: Բանական է, որ այդպիսի գործունեությունը կօգնի աշակերտներին իրենց մեջ մշակել սեփական հայացքներ ու համոզմունքներ: Դրանց միջոցով աշակերտները կըմբռնեն տեսության ու պրակտիկայի անհրաժեշտ կապը, նրանց միասնությունը:

Կյանքի ու պրակտիկայի հետ ուսուցման կապի սկզբունքը ուսուցչի առջև դնում է սովորողների հաստատական գործունեության, արտադրության մեջ ընդգրկելու խնդիր, որպեսզի նրանք զգան իրենց յուրացրած գիտելիքների և դրանց կիրառման օգտակարությունը:

Դաստիարակության գործընթացի առանձահատկությունները

Պետք է իմանալ, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումն ենթադրում է աճող սերնդի մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակություն:

Որպեսզի անձը ճշված ուղղություններով ունենա և՛ զարգացվածություն, և՛ դաստիարակվածություն, կարևոր է, որ այդ երկուսը ներդաշնակված լինեն մարդու անձի մեջ: Ահա սա է առաջատար նպատակը: Այդ են հաստատում աշխարհի առաջադեմ մանկավարժները, հոգեբանները, սոցիոլոգները, փիլիսոփաները, ընդհանրապես բոլոր մեծ մտածողները: Ահա թե ինչու այդ հիմնահարցը լուծելու համար մանկավարժական գիտության առջև դաստիարակության նկատմամբ զուգակցված, համալիր մոտեցման խնդիր:

Դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամասերի առանձնացումը որոշ չափով պայմանական է, քանի որ փոխկապակցված են ու փոխկախված: Դա հաստատվում է հետևյալ իրողությամբ, դաստիարակության որևէ բաղադրամասի մեկ առանձին խնդրի լուծում արտացոլվում է մյուս բաղադրամասերի խնդիրների լուծման մեջ: Օրինակ՝ ֆիզիկական դաստիարակության լավ ձևով ապահովումն արտացոլվում է նաև բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակության խնդիրների լուծման մեջ և հակառակը:

Աշակերտներին առաջարկում եմ դիտել «Պելե» փաստագրական կինոնկարը: Էկրանի վրա շատ պարզ ու որոշակի արտահայտված են Պելեի պրոֆեսիոնալիզմի բոլոր առանձնահատկությունները, նրա՝ որպես ֆուտբոլիստի, ամբողջական կերպարի դրսևորումները, համառությունը, ջանադիր աշխատանքը դաշտում,

պահն ըմբռնելու ընդունակությունը, ստեղծած իրավիճակները գիտակցելու և դրանք հաղթահարելու կարողությունը, աներևակայելի աշխատասիրությունը, պահեստավորված խելքի կայծակնային արագությամբ գործադրումը, բոլոր խաղացողներին իր տեսադաշտում պահելու, ուշադրությունը ճիշտ բաշխելու ընդունակությունն, իր ներքին էներգիան ճիշտ օգտագործելու վարպետությունը, հզոր կամքը, պարտք ու պատասխանատվության խոր զգացումը, աշխատանքի նկատմամբ մարդկային վերաբերմունքը, սրատեսությունը, վճռականությունն ու սկզբունքայնությունը, նպատակին հասնելու ձգտումը, կոլեկտիվիզմը, կարգասիրությունն, ընկերասիրությունն, անսահման սերն իր գործի նկատմամբ, բոպեն արդյունավետորեն օգտագործելու գիտակցված գործունեությունն, արագ կողմնորոշվելու, ցանկացած պահի վճիռներ կայացնելու, խաղի ընթացքն ու հեռանկարը տեսնելու ու զգալու կարողությունը, ճարպկությունը, արագությունը, դիմացկունությունը, զսպվածությունն ու համբերատարությունը, իր խաղի արվեստի աստիճանի հասցնելու ընդունակությունը և այլն:

Այստեղ կան և՛ բարոյական, և՛ մտավոր, և՛ աշխատանքային. և՛ գեղագիտական, և՛ ֆիզիկական,և՛ իրավական դաստիարակության որակներ, որոնք բոլորը փոխկապակցված են, փոխպայմանավորված և փոխմիասնական: Պելեի խաղերի ընթացքում, նույն պահին դրսևորվող ճարպկությունը, ուժը, դիմացկունությունն, արագությունը և այլն՝ ֆիզիկական դաստիարակության որկաներ են: Դժվարին իրավիճակի գիտակցումը, մտածողության կողմնորոշումը, ճիշտ վճիռներ ընդունելու ընդունակությունը՝ մտավոր դաստիարակության որակներ: Գեղեցիկ խաղը՝ գեղագիտական դաստիարակության որակներ: Կարգասիրությունը, ընկերասիրությունը, կոլեկտիվիզմը պարտքի ու պատասխանատվության զգացումը՝ բարոյական դաստիարակության որակներ: Աշխատանքի նկատմամբ մարդկային վերաբերմունքն, աշխատասիրությունը և այլն՝ աշխատանքային դաստիարակության որակներ են: Նշված որակները հանդես են գալիս ոչ թե հերթականությամբ առանձին – առանձին տարբեր պահերի, այլ տվյալ պահին, մեկ ամբողջականության, միասնության մեջ: Դա այդպես է նաև դաստիարակության գործընթացում, երբ աշակերտի դաստիարակությունն իրականացվում է որևէ բաղադրամասի, օրինակ՝ ֆիզիկական դաստիարակության, ուղղությամբ, ապա այդ ընթացքում մեզանից անկախ, իրենց մասնակցությունն են ունենում բարոյական, աշխատանքային, գեղագիտական և այլ բաղադրամասերի առանձին որակներ: Այդպիսին է դաստիարակության բնույթը, նրա ներքին բովանդակությունը:

Դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամասերի փոխկապվածությունն ու փոխմասնությունը,դրանց մեջ մտնող որակներն աշակերտի համար, անհրաժեշտ պահի,որպես առաջատար ու որոշիչ, առաջ գալու գործընթացը դառնում է գլխավոր դրդապատճառ դաստիարակության որևէ խնդրի լուծման համար:

Դաստիարակության բովանդակությունը չի սահմանափակվում միայն դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամասերով: Դաստիարակության բովանդակության մեջ են մտնում նաև դաստիարակության համար կիրառվող գիտելիքների համակարգը, արտադասարանային ու արտադպրոցական աշխատանքների համար պայմանների ստեղծումը, անձի որակական դերը, վարքի կայուն սովորույթները կոլեկտիվիստի, քաղաքացու ձևավորումը և այլն, որոնք նույնպես սերտորեն կապված են դաստիարակության ընդհանուր համակարգի հետ:

Եզրակացություն

Ուսուցչին ներկայացվում են մի շարք մանկավարժական պահանջներ: Նախ և առաջ ուսուցիչը պետք է խորապես տիրապետի այն ուսումնական առարկան, որ ինքն է դասավանդում, տիրապետի գիտական մակարդակով: Ու երբեք չբավարարվի ձեռք բերած գիտելիքներով, իր ունեցած իմացությամբ, անընդհատ համալրի իր գիտելիքները, ընդարձակի մտահորիզոնը, ունենա մասնագիտական խելք և մտածողություն, այլապես նա չի գտնվի այն բարձրության վրա, ուր մշտապես կանգնում է մեծանուն վաստակած ուսուցիչը:

Իր մասնագիտական առարկան դասավանդող ուսուցիչը պարտավոր է իմանալ նրա բովանդակության, թեկուզ ամենաչնչին թվացող, անգամ չերևացող մասնիկը, իմանա և՛ գլխավորը և՛ երկրորդականը: Մի խոսքով ամենը: Չէ որ դրանք և՛ իրեն են պետք և՛ իր աշակերտներին :

Ուսուցիչն իր մասնագիտությունը լավ տիրապետելուց բացի պետք է ընդարձակ գիտելիքներ ունենա նաև հարակից առարկաներից: Ընդհանրապես նա պետք է համակողմանի զարգացած անձնավորություն լինի: Ահա որն է կարևորագույնը ուսուցչի համար: Ա.Ս Մակարենկոն ասում էր «Աշակերտները կներեն իրենց ուսուցիչների և՛ խստությունը, և՛ չարությունը , և՛ նույնիսկ բծախնդրությունը, բայց չեն ների գործի վատ իմացումը: Մանկավարժի մեջ նրանք ամենից բարձր են գնահատում վստահ և հստակ գիտելիքը, կարողությունն, արվեստն, ոսկի ձեռքերը, աշխատասիրությունը»:

Գրականության ցանկ

1. Յու. Կ. Բաբանսկի, Մանկավարժություն, Ե. 1986
2. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, Ե. 2005
3. Լ. Թ. Ասատրյան, Կրթության համակարգի կառավարման հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97» 2003

4. Լ. Վ. Թորգոմյան, Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տոներ» 2005

Դասապլան1

Ուսուցիչ՝ Ֆլորա Աթաջանյան

Առարկա՝	Հայոց պատմություն		Ամսաթիվ ————		Կիսամյակ *II*		Դասարան **7**-րդ

Թեմա՝	Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում			
Օգտագործվող նյութեր՝	Քարտեզ, նկարներ, աշխատանքային տետրեր, դասագիրք			
Դասի նպատակ	• կիմանան Կիլիկիայում հայկական իշխանության ստեղծման նախադրյալները • պատկերացում կունենան Կիլիկիայի աշխարհագրական դիրքի և հայերի այնտեղ տեղափոխվելու պատմական պատճառների մասին • կարողանան քարտեզի վրա ցույց տալ Կիլիկիայի տեղը, ներկայացնել նրա բնակլիմայական պայմանները • կարողանան թվարկել դասում օգտագործված հիմնական անունները • կպարզաբանեն Կիլիկիայում հայերի բնակության պատճառները և հետևանքները • կարժևորեն բուն հայրենիքից հեռու միավորման և անկախ պետության ստեղծելու ձգտումը			
Վերջնարդյունքներ	– ներկայացնել և բացատրել Կիլիկիայի տեղը, դիրքը և պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, Հայկական իշխանությունների և դրանց առաջացման ժամանակաշրջանը Ռուբինյան իշանների և նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները – բնութագրել Ռուբինյան և Հեթումյան նշանավոր գահակալն երին – բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու պատճառները			
Գործողություն ժամ/տևողություն	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5 րոպե	Ողջույն պատասխանել ուսոցչի հարցերին	Ողջույն հաշվառում, դասի նախապատրաս–տում տնային առաջադրանքների ստուգում	Ինչ անհասկանալի հարցեր ունեն դասից	

Խթանում **20** րոպե	Գրատախտակին գրել «Կիլիկիա» բառը և «Մտագրոհ» մեթոդի միջոցով աշակերտները ներկայացնում իրենց գիտելիքները Կիլիկիայի վերաբերյալ քարտեզի վրա ցույց տալիս Կիլիկիայի տեղը	Հարցադրումների միջոցով աշակերտներին ներկայացնել դասի կարևոր իրադարձություն-ների և պատմական կերպարներին, նրանց կատարած քայլերը, որպես պետական գործիչներ	1) Որո՞նք էին Կիլիկիայում հայ բնակչության հաստատվելու պատճառները: 2) Ե՞րբ և ինչպե՞ս առաջացան հայկական իշխանությունները Կիլիկիայում: 3) Ի՞նչ հանգամանքներ բարդացրին հայկական իշխանությունների դրությունը: 4) Ովքե՞ր նորաստեղծ իշխանության առաջին տիրակալները: 5) Բնութագրել Ռուբինյան իշխանության իշխաններ Թորոս I-ի քաղաքա-կանությունը Դաշտային Կիլիկիայի համար պայքարում:	Ձրույց «Մտագրոհ» «Պրիզմա» «Բառաբաժան»
Իմաստի ընկալում **10-15** րոպե	Բաժանվում են 3 հոգանոց խմբերի՝ ըստ դասի ենթա-վերնագրերի: Հանձնարարվում է կիրառել «Փոխադարձ ուսուցում» մեթոդը,	Հարցերի միջոցով ստուգել աշակերտների գիտելիքները դասանյութի վերաբերյալ	1. Ինչպիսի՞ն էին Կիլիկյան Հայ-ի բնակլիմայական պայմանները: 2. Հայ իշխաններից ովքե՞ր ինքնուրույն տիրակալներ:	Հարցադրումների մեթոդ

	ովորել և միմյանց ներկայացնել դասը			
Կուռադատում **10** րոպե	Աշակերտները իարժեք ընկալում են, դասի բոլոր հարցա–դրումները և հիմնական գաղափարները	Ամրապնդում եմ և ամբողջացնում հիմնական գաղափարները		
Տնային աշխատանք **2** րոպե	***Տնային առաջադրանքի հանձնարարում՝*** պատմել Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Դասից դուրս բերել նոր անուններ և հասկացություններ:			

Դասապլան2

Ուսուցիչ՝ Ֆլորա Աթաջանյան

Առարկա՝	Հայոց պատմություն		Ամսաթիվ ————		Կիսամյակ *I*		Դասարան **7**–րդ
Թեմա՝	Հայոց հայրենիք						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, տետրեր, գունավոր մատիտներ, ուրվագծային քարտեզներ, պատմության ատլաս, քարտեզ						
Դասի նպատակ	Նպաստել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի, բարձր գագաթների, լճերի, գետերի, վարչական բաժանման վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, համեմատելու, արժևորելու կարողությունների ձևավորմանը: արևորել պատմական Հայաստանի դերը:						
Վերջնարդյունքներ	– ներկայացնել և բացատրել Հայրենիք հասկացությունը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, օտարների կողմից հայերին և Հայաստանին տրված անունները:						

	– քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի լեռները, գետերը, լճերը:			
Գործողություն ժամ/տևողություն	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5 րոպե	Ողջույն պատասխանել ուսուցչի հարցերին	Ողջույն հաշվառում, դասի նախապատրաստում: Վեր հանել աշակերտների գիտելիքները, թարմացնել երեխաների հիշողությունը:	Ինչ հարցեր ունեն աշակերտները դասի վերաբերյալ	
Խթանում **20** րոպե	Աշակերտները կատարում են «Մտագրոհ» վարժությունը, որի նպատակն է վեր հանել ունեցած գիտելիքները	Ուսուցչի կողմից կատարվում է «Կարճ դասախոսություն» և «Զննականություն» մեթոդները, որի նպատակն է որոշակի գիտելիքների մատուցում		Ձրույց «Մտագրոհ» մտքերի, քարտեզագրում
Իմաստի ընկալում **10–15** րոպե	Աշակետները լրացնում են ուրվագծային քարտեզները	Ուսուցիչը համակցված ու մատչելի լեզվով սովորողներին է ներկայացնում դասանյութի հիմնական Գաղափարը: Մերդ ընդ մերթ աշխարհա–գրական օբյեկտները ցուցադրելով քարտեզի վրա:	1. Բացատրել «հայրենիք» հասկացությունը: 2. Ո՞րն է հայերի հայրենիքը: 3. Նկարագրել Հայկական լեռնաշխարհի դիրքն ու սահմանները: 4. Օտարները ինչպե՞ս են կոչել Հայաստանը:	Մտքերի քարտեզագրում մեթոդ

			5. Ներկայացնել Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները և ցույց տալ քարտեզի վրա;	
Կշռադատում **10** րոպե	Աշակերտները լիարժեք ընկալում են դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները	Հարց ու պատասխանի միջոցով ամրապնդել ձեռք բերված գիտելիքները, կարելի է կատարել անդրադարձ		
Տնային աշխատանք **2** րոպե	***Տնային առաջադրանքի հանձնարարում՝*** պատմել՝ Հայկական լեռնաշխարհը՝ Հայերի հայրենի դասը, նկարել Հայկական լեռնաշխարհի քարտեզը՝ նշելով բարձր լեռները ու լեռնաշղթները:			